

յարգելանին, մինչ յետ ամաց հնգից էած կին գկիպրացին Լիւզինեան. եւ ոչ
 էր հնար ազատ լինել 'ի մեղադրանաց, թերեւս եւ 'ի բանադրանաց Քահա-
 նայապետին Իննովկենտեայ, որ յոժ վրէժխնդիր էր այսպիսի դիպաց: Իսկ
 յայն միջոց ժամանակի մինչ 'ի վարանս էր՝ մայր նորա Ռիթա թելադիր
 եղել նմա զթոռնեայն իւր Ռուբէն-Ռեմունդ՝ զժառանգ իշխանութեանն
 Անտիոքայ, կարգել եւ իւրոյ իսկ թագաւորութեանն ժառանգորդ. որ էր
 յայնժամ (1209) ամաց իբր երկոտասանից, եւ հալածեալ 'ի կոմսէն Տրիպօլ-
 սի՝ կայր առ Լեւոնի, եւ վարժէր յերկոսին եւս բարբառս՝ Փռանկաց եւ Հա-
 յոց, որպէս եւ 'ի սովորոյթս նոցին. գոր եւ անդստին 'ի ծննդենէ նորին խոր-
 հեցեալ էր Լեւոնի որդեգրել, եթէ ոչ ունիցի գաւակ արու, վասն որոյ «եւ
 տայր սնուցանել զնա մեծաւ զգուշութեամբ». եւ ըստ զարգանալ նորա եւ
 աճել հասակաւ եւ կրթութեամբ՝ եւս քան զեւս «գուարճանայր 'ի վերայ
 Ըռովբինի. քանզի էր պատանի գեղեցկատեսիլ, հասակաւ երկայն, հերով
 խարտեաշ որպէս թել ոսկւոյ. ձիավարժ գովելի. իշխանական ձեւօք պատ-
 կառելի, եւ անձամբ սուրբ»:- Արդ առաւել եւս հաստատեալ Լեւոնի 'ի
 խորհրդեանն՝ ըստ խրատու մօր իւրոյ զգաստի, 'ի դէպ ժամանակի հան-
 դիսական գումարման ուրեք՝ «եցոյց ամենայն հնազանդելոց իւրոց՝ մեծա-
 մեծաց եւ փոքունց, յայտնի ժառանգ թագաւորութեան իւրոյ զԸռովբէն,
 զորդի դստեր եղբօրն իւրոյ Ըռովբէնի». եւ զայս արար Լեւոն՝ ոչ միանգամ,
 այլ «եւ երկիցս եւ երիցս յայլ եւ այլ ժամանակս՝ երդմնեցոյց տղային Ըռով-
 բինի զամենեսեան, զի նմա ծառայեսցեն յետ մահուանն իւրոյ»: Նաեւ եր-
 կիցս եւ երիցս մուտք մանկանն պայազատի յիշխանութիւն Անտիոքայ եւ
 'ի բաց մերժումն 'ի հօրեղբօրէն, ոչ դրդուեցուցին զԼեւոն. զի եթէ այսպէս եւ
 եթէ այնպէս՝ ասէր, Ռուբէն կայցէ զաթոռ իմ եւ յաջողագոյն եւս լիցի առ 'ի
 ձեռս բերել զիւր բնական ժառանգութիւնն, եւ ընդ միով գլխով զուգեալ
 երկոցուն իշխանութեանցն՝ լիցի պետութիւն հզօր. եւ ոչ շատ ինչ վարա-
 նէր ընդ օտարանալ ազգային հայկական հրահանգաց. քանզի 'ի բազում
 ինչ իրս հաւասարեալ էին երկոքին դրացի պետութիւնքն, եւ միաբանու-
 թեամբ իսկ հաւատոց սերտեալք, եւ զի Ռուբէն յարքունիս իւր սնեալ եւ
 դաստիարակեալ՝ յաւէտ հայրօրէն վարժեալ լինէր քան ըստ Փռանկացն:
 Ապա ամենայնիւ հոգայր որդեգրաբար ընդունել եւ պահել զբարեբոյս
 պատանին յիւր յաջորդութիւն, եւ զամենայն որ արգել կամ ընդդիմակ ինչ
 նմա լինել կարծէին՝ 'ի բաց բառնալ:-